ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀՈՂԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ VII—IX ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Արաբական խալիֆայության մեջ և մանավանդ Հայաստանում VII—IX դդ. ժառանգական հողատիրության էությունը հասկանալու համար կարևոր նշանակություն ունի խալիֆայության կողմից տրված պայմանագրերի ուսումնասիրությունը։

Հայաստանի արաբական ժամանակաշրջանի և ընդհանրապես վաղ միջնադարի ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել հայ նախարարների հողատիրական իրավունքների էության մասին։ Մեր դարի սկզբի ուսումնասիրողները (Մ. Ղազարյան, Ժ. Լորան[1], ինչպես նաև Լեո) թեև հատուկ չեն զբաղվել այս հարցով, այսուհանդերձ մեծ մասամբ հայտնել են այն կարծիքը, թե հայ նախարարները լրիվ պահպանում էին իրենց ժառանգական իրավունքները։ Սրան հակառակ սովետական շրջանում Խ. Սամվելյանը, Ս. Երեմյանը և ուրիշներ, հանգում են այն եզրակացության, որ արաբական ժամանակաշրջանում նախարարական սիստեմը քայքայվեց[2] և որ նախարարները զրկվեցին հողատիրության ժառանգական իրավունքներից[3]։

Այս հարցում, ինչպես ասվեց, հստակություն կարող է մտցնել խալիֆայության պայմանագրերի ուսումնասիրությունը։ Այդ պայմանագրերը, որոնց տեքստերը պահպանվել են արաբ պատմիչների մոտ, խալիֆայության կազմում գտնվող տարբեր երկրների են վերաբերում և դրանց համեմատական ուսումնասիրությունը կարող է օգնել ավելի լավ հասկանալու ժառանգական հողատիրության էությունը Հայաստանում տվյալ ժամանակաշրջանում։

Խալիֆայության պայմանագրերը կնքվում էին թե՛ երկրների ու քաղաքների, թե՛ առանձին անձնավորությունների հետ։ Ժամանակի ընթացքում դրանք իրենց նշանակությունը չէին կորցնում[4], թեև տվյալ գավառում տիրող տոհմի նոր ներկայացուցիչը կարող էր իր իրավունքները վերահաստատող նոր պայմանագիր ստանալ։ Խալիֆայության անունից պայմանագրեր (հրամանագրեր) կարող էին տալ փոխարքաները, կառավարիչները, զորավարները և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ։ Լինում էին դեպքեր, երբ խալիֆան անձամբ էր տալիս պայմանագիր-հրովարտակը։

---

[1] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, *էջ 68։*

[2] *Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1940, էջ 125—128, 175—176։*

[3] «Очерки истории СССР, III—IX вв.», М., 1958, *էջ 485։*

[4] *Ըստ արաբ օրենսգետ Աբու Յուսուֆի՝ «հաշտության պայմանագիրը պետք է վավերական ճանաչվի, ինչպես ճանաչել է Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆան], մինչև մեռելների հարության օրը»* (Abu Yusuf, Kitab al-Kharadj, Bulaq, *1302 (1884), էջ 87)։*

Պայմանագրերը մեծ մասամբ կոչվում էին «ահդ» (عهد), «ուխտ» կամ «պայմանագիր», «աման» (أمان), «ապահովության դիր» կամ «շարթ» (شرط), «պայմանագիր»։ Սակայն ամենից շատ օգտագործվում էր صلح հաշտության [պայմանագիր] և صلح «հաշտության [պայմանագիր] կնքեց» արտահայտությունը։ «Ահդ» նշանակում էր հենց պայման, պայմանագիր և որոշում էր մեծ մասամբ ոչ մահմեդականների համայնքային կամ նրանց իշխանների հողատիրական իրավունքները և այդ պատճառով ոչ մահմեդականները և առաջին հերթին քրիստոնյաները կոչվում էին «պայմանագրի ժողովուրդ»[5]։ «Ամանը» ավելի ընդհանուր իմաստ ուներ և շատ գործածական բառ էր։ «Ամանը» ստացողը ապահովության երաշխիք ուներ թե՛ իր անձի, թե՛ ունեցվածքի ու կալվածքների համար[6]։

Ըստ մահմեդական իրավունքի, նվաճումները կատարվում էին հաշտության պայմանագրով (صلحا) կամ սրի ուժով (عنوة), այսինքն՝ առանց որևէ պարտավորության. սրի ուժով նվաճված երկրին կամ քաղաքին խալիֆայությունը ոչինչ չէր երաշխավորում և միայն հաշտությամբ նվաճելու դեպքում էր պայմանագրեր տալիս։

Այս բաժանումը սրով նվաճված և հաշտության պայմանագրով նվաճված երկրների՝ հաճախ ենք գտնում արաբ մատենագիրների, ընդ որում թե՛ պատմիչների, թե՛ օրենսգետների[8] (օրինակ՝ Աբու Յուսուֆ[9] և Մավարդի) մոտ։ Այս բաժանման համապատասխան էլ ոչ մահմեդականների նվաճված հողը և նրանց ունեցվածքը երկու մասի էր բաժանվում, ընդ որում, պայմանագրով խալիֆայությանն անցածը կոչվում էր ֆայ՝ (فيء)՝ ձեռք բերված (հող, ունեցվածք), իսկ սրով գրավվածը՝ ղանիմա (غنيمة), այսինքն կողոպուտ, ավար[10]։

Նույն հարցի շուրջ կնքված պայմանագրերը միատեսակ չէին լինում, և տարբեր երկրների հետ կարելի էր տարբեր բնույթի պայմանագրեր կնքել։ Մավարդին նշում է, որ «իմամը պետք է իր կնքած պայմանագրի պայմանները մտցնի երկրների դիվանների մեջ և հետևի, որ դրանք պահպանվեն, որով-

---

[5] J. Schacht, Ahd, Enc. de l'Islam, nouv. ed., 1, 263. Այս բառի մասին տե՛ս E. Tyan, Institutions du droit public musulman, Paris, 1953, էջ 270—271։

[6] J. Schacht, Aman. EI, 1, էջ 441—442.

[7] Մահմեդական իրավունքը հայտնի էր իր չորս իրավագիտական դպրոցներով, որոնց հիմնադիրներն են. Աբու Հանիֆա (մեռ. 767), Մալիք իբն Անաս (մոտ 715—795), ալ-Շաֆիի (767—820) և Ահմադ իբն Հանբալ (մեռ. 855)։ Սակայն հողատիրական իրավունքների ուսումնասիրման համար առավել կարևոր նշանակություն ունեն Աբու Հանիֆայի աշակերտ Աբու Յուսուֆի (մեռ. 798) «Հարկերի մատյանը»(Abu Yusuf, Kitab al-Kharadj, Bulaq, (1302) (1884) և Շաֆիիների դպրոցին պատկանող Մավարդիի (Մաուարդի) «Պետական կանոնների մատյանը» (Mavardii Constitutiones Politicae, Bonn, 1853)։ Իհարկե, սրանք օրենսգրքեր չէին, այլ գոյություն ունեցող իրավական վիճակի ընդհանրացումը կամ իրավունքի տեսությունը, որի մեջ հեղինակները (մանավանդ Մավարդին) որոշ դեպքերում տեղ են տալիս իրենց նախասիրած սկզբունքներին։

[8] Հաշտության պայմանագրերի հետ կապված հարցերը վաղուց են գրավել ուսումնասիրողների ուշադրությունը (տե՛ս M. Worms, Recherches sur la constitution de la propriete territoriale dans les pays musulmans, Paris, 1846, էջ 18—20)։

[9] Abu Yusuf, էջ 36.

[10] Mawardi, էջ 217.

հետև առանձին համայնքների հետ կնքվում են տարբեր պայմանագրեր, որոնք գուցե միմյանց հակասեն»[11]։

Պայմանագրերը կնքվում էին տարբեր նպատակներով։ Նրանց մի մասը վերաբերում էր ոչ մահմեդական համայնքների կրոնական իրավունքներին, ինչպես նաև նվաճված քաղաքների կամ երկրների բնակիչների անձի կամ գույքի ապահովությանը, իսկ որոշ մասը՝ տեղական իշխանների հողատիրական իրավունքներին և այլն։ Դրանք կնքվում էին ավելի շատ նվաճումների շրջանում՝ VII դարում։ Սակայն այս երևույթը հետագայում ևս գոյություն ուներ։ Դժբախտաբար մեզ քիչ են հասել VIII դարում կնքված պայմանագրերի բնագրեր, ուստի VII դարում կնքված պայմանագրերը մեզ համար կարևոր նշանակություն ունեն։

Պայմանագիրը որոշում էր խալիֆայության և նվաճվածների փոխադարձ պարտավորությունները։ Խալիֆայության գլխավոր պահանջը հարկերի վճարումն[12] էր, իսկ այն, ինչ խոստացվում էր դրա փոխարեն նվաճվածին, մեզ հետաքրքրում է առաջին հերթին։

Ասորիքի, Միջագետքի, Պաղեստինի կամ Եգիպտոսի բնակչությանը մեծ մասամբ տրվում էին անձի, գույքի ապահովությունը և պաշտամունքի ազատությունը երաշխավորող պայմանագրեր, ընդ որում դրանք ընդհանրապես տրվում էին առանձին քաղաքների։ Նրանց բովանդակության մեջ բավական մեծ ընդհանրություն կար։ Այս երկրներում նվաճողները տեղական իշխանների հողատիրական իրավունքները հիմնականում չէին երաշխավորում։ Այստեղ ուժեղ էր պետական հողատիրությունը, և նվաճված հողերը հենց VII դարից առատ կերպով տրվում էին արաբ ռազմիկներին[13]։

Պաղեստինն ու Ասորիքը արաբները գրավեցին 633—639 թթ. և բազմաթիվ քաղաքների քրիստոնյա ազգաբնակչությանը պայմանագրեր տվեցին։ Օրինակ, Պաղեստինի Ֆիհլ[14] և Տիբերիա[15] քաղաքների նվաճումից հետո կնքվեցին պայմանագրեր, ըստ որոնց գլխահարկ ու հողահարկ վճարելու դիմաց երաշխավորվում էր բնակիչների անձի, գույքի և քաղաքի պարիսպների ապահովությունը։ Ըստ Հոմս (Եմեսա) քաղաքի բնակիչների հետ կնքված պայմանագրի, արաբները իրավունք ստացան տեղավորվելու քաղաքի տարբեր թաղերում։ Երաշխավորվում էր բնակիչների անձի, գույքի և քաղաքի պարիսպների ապացան պայմանագրեր, որոնք երաշխավորում էին քրիստոնյաների եկեղեցիների և նրանց ունեցվածքի ապահովությունը։ Այս շրջանին է վերաբերում Օմար խալիֆայի (634—644) կողմից քրիստոնյաներին տրված այն ավանդական

---

11 Նույն տեղում, էջ 251։

12 A. V. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, t. I, Wien, 1875, էջ 59—60։

13 Արաբական ցեղերը դեռ III դարից հաստատվել էին թե՛ Ասորիքում, թե՛ Միջագետքում։

14 Liber expugnationis regionum auctore al-Beladsori, Lugd. Bat., 1866, էջ 115։

15 Beladsori, էջ 116.

16 Նույն տեղում, էջ 122։

17 Yaqubi, Tarikh, II, Beyrouth, 1960, էջ 147։

պայմանագիրը, ուր շարադրված է վերջիններիս իրավական վիճակը խալիֆայության մեջ[18]։

Այս պայմանագրերը չէին երաշխավորում տեղական բնակչության հողատիրական իրավունքները (և նույնիսկ քաղաքներում ունեցած որոշ իրավունքները) և ճանապարհ էին բաց անում արաբ գաղթականների առջև, որոնք տեղավորվեցին Ասորիքի քաղաքներում ու գյուղերում։ Ասորիքում ընդարձակ հողեր ուներ Օմայան խալիֆայական տունը և ընդհանրապես տիրապետում էր արաբ տարրը։

639 թ. Վերին Միջագետքը նվաճող Իյադ իբն Ղանմ զորավարը պայմանագրեր տվեց Ռակկա, Եդեսիա և այլ քաղաքներին, որոնք երաշխավորում էին բնակիչների միայն անձի ապահովությունը, ունեցվածքը (տներ և այլն) և եկեղեցիները, բայց ոչ նրանց հողերը։ Արաբ պատմիչ Բալազուրին հատկապես շեշտում է այս պարագան. «Իյադը,— ասում է նա,— դրավեց Ռակկան, Խառանը, Ռուհան (Եդեսիան), Մծբինը, Մայաֆարիկինը (Նփրկերտ), Կարկիսիան և Եփրատի գյուղերն ու քաղաքները հաշտության [պայմանագրով], իսկ նրանց հողերը՝ սրով»։ Ապա շեշտելու նպատակով անմիջապես կրկնում է, ընդհանրացնելով նույն միտքը. «Իյադը Ջազիրան (Վերին Միջագետքը) և նրա քաղաքները նվաճեց հաշտության [պայմանագրով], իսկ նրանց հողերը՝ սրով»[19]։ Իսկ ինչ վերաբերում է հողը սրով նվաճելուն, ապա այդ մասին Աբու Յուսուֆը հստակ կերպով գրում է. «Որևէ հող, որ իմամը (խալիֆան) կնվաճի սրով, այն կարող է բաժանել նվաճողների միջև»[20]։ Ուստի արաբները չէին երաշխավորում Ջազիրայի իշխանների հողատիրական իրավունքները, այլ երաշխավորում էին բնակչության միայն անձի ու գույքի ապահովությունը և կրոնական ազատությունը։

Ելնելով այն բանից, որ Վերին (ինչպես նաև Ստորին) Միջագետքի քրիստոնյա կամ այլ կրոնի (և հիմնականում քաղաքային) բնակչությանը երաշխավորվում էր միայն անձի, ունեցվածքի (տներ և այլն) և կրոնի ապահովությունը, նվաճողներն իրենց լրիվ ազատություն էին տալիս՝ ըստ իրենց կամեցողության տնօրինելու հողային տարածությունները, որոնց նկատմամբ տեղացիների իրավունքը, ինչպես տեսանք, երաշխավորված չէր որևէ պայմանագրով։ Բալազուրին վկայում է, որ հենց VII դարում խալիֆայությունը այս երկիրը բնակեցրեց արաբներով, տալով նրանց ընդարձակ հողեր[21]։ Բացի այն բանից, որ հարքունիս էին գրավվել բյուզանդական կայսրերին և սասանյան արքաներին պատկանող բոլոր հողերը, գրավվեցին նաև արաբներին դիմադրած շատ ավատատեր իշխանների հողեր։ Թե՛ Օմայանները, թե՛ Աբբասյանները, ինչպես նաև բարձրաստիճան զորավարներ, այստեղ ունեն ագարակներ (مزارع) և այլ կալվածքներ (ضياع)[22]։

---

[18] Н. Медников. Палестина от завоевания ее арабами до крестовых походов, т. I. Петербург, 1903, էջ 538—613։

[19] Beladsori, էջ 175.

[20] Abu Yusuf, էջ 35.

[21] Beladsori, էջ 177.

[22] Նույն տեղում, էջ 181. ضيعة հոգնակին ضياع նշանակում է կալված, տիրույթ։ Այս հասկացության մեջ մտնում էին թե՛ պետական հողերը (սուլթանիյա, գիվանիյա), թե՛ խալիֆայական անձնական հողերը (խասսա), թե՛ ավագանու ժառանգական տիրույթները և այլն։ Կալվածատերը կոչվում էր صاحب الضيعة (C. I. Cahen, Day'a, EI, II, 1965, էջ 193—194)։

Այսպիսով, Ասորիքն ու Միջագետքը, որոնց տեղական իշխանների հողատիրական իրավունքները երաշխավորված չէին և ուր տիրապետում էր պետական և պայմանական հողատիրությունը, շատ արագ արաբացան. արդեն երկու դար անց այս երկրներում տիրապետող լեզուն արաբերենն էր, ընդ որում ոչ միայն մահմեդականների, այլև քրիստոնյաների համար։

Այլ էր դրությունը և, բնականաբար, այլ էր տրված պայմանագրերի բնույթը խալիֆայության մյուս մասերում՝ իրանական նահանգներում, Հայաստանում և այլուր։ Այս երկրների ժողովուրդները, ի տարբերություն Ասորիքի ու Միջագետքի, կարողացան իրենց ինքնուրույնությունը պահպանել շատ հարցերում։ Նախքան արաբական նվաճումը, Իրանը հզոր տերություն էր, իսկ Հայաստանը գրեթե ամբողջ VII դարում կիսանկախ, մերթ նաև՝ լրիվ անկախ վիճակ ուներ և արդեն վաղ միջնադարում կերտել էր սեփական հարուստ մշակույթ։ Այս երկրների տեղական ավատատեր իշխանները կարողացան պահպանել իրենց ժառանգական, հողատիրական իրավունքները։

Աբու Յուսուֆը հարկերի և դրա հետ կապված հարցերի մասին խոսելիս հաճախ անդրադառնում է հողատիրության ձևերին, տալով պայմանագրով երաշխավորված հողատիրության իրավաբանական ձևակերպումը. «Ոչ-արաբների (աջամների)[23] որևէ երկրում, ուր հանդես կգա Իմամը (խալիֆան) և այն [հողը] կթողնի բնակիչների ձեռքում, դա խարաջ վճարող հող է։ Սակայն եթե այն բաժանի նրանց միջև, ովքեր նվաճել են այն, ապա դա տասանորդ (ուշր) վճարող հող կդառնա... և ոչ արաբների ամեն մի հող, որի բնակիչներն ունեն հաշտության [պայմանագիր] և դարձել են հովանավորյալներ (զիմմի), դա խարաջ վճարող հող է»[24]։

Թաբարու և այլոց մոտ հիշված են մի շարք պայմանագրեր, որոնք արաբ զորավարները կնքել էին իրանական տարբեր նահանգներում ու քաղաքներում՝ Սպահան (Իսֆահան)[25], Ռայյ (Թեհրան)[26], Կումիս[27], Թաբարիստան[28] և այլն։ Այս պայմանագրերում, ընդհանրապես, ակնարկ կա հողային տիրությունների նկատմամբ տրված իրավունքների մասին, իսկ որոշ պայմանագրեր հրստակ կերպով երաշխավորում են տեղական ավատատերերի հողատիրական իրավունքները։ Ահա մի օրինակ.

---

23 Առաբիայի հետ սերտորեն կապված Միջագետքի, Ասորիքի ու Եգիպտոսի և այլ երկրների (Իրան, Հայաստան) միջև եղած տարբերությունը նկատելի երևույթ է խալիֆայության պատմության մեջ։ Պրոֆ. Բ. Պետրուշևսկին գրում է. «Արբասյանների օրոք հողի նկատմամբ պետական սեփականությունը գերակշռում էր խալիֆայության կենտրոնական նահանգներում, որտեղ կային ոռոգման խոշոր սիստեմներ, առաջին հերթին՝ Իրաքում ու Եգիպտոսում։ Այլ նահանգներում պետականների կողքին կային շատ մասնավոր սեփականատիրական հողեր։ Ոչ պայմանական մասնավոր հողատիրությունը (միլք, մուլք) գերակշռում էր, օրինակ, Ֆարսում մինչև X դարը («История стран зарубежной Азии в средние века». М., 1970, էջ 141)։ Հետաքրքրական է նշել, որ դեռ VIII դարում խալիֆայության մեջ (օրինակ, Իրաքում) մեծ ձգտում կար «դանձագին» հողեր ձեռք բերելու (А. Мец. Мусульманский ренесанс, М., 1966, էջ 99—100)։

24 Abu Yusuf, էջ 39, Yahia ben Adam's Kitab al-Kharadj (A. Ben Shemesh, Taxation in Islam, v. I, Leiden, 1958), էջ 27։

25 „Tarikh at-Tabari", IV, Le Caire, 1967, էջ 111։

26 Նույն տեղում, էջ 151։

27 Նույն տեղում, էջ 152։

28 Նույն տեղում, էջ 153։

«Սա Նուման իբն Մուկարրանի տված [դիրն] է Մահ Բահրադանի ժողովրդին։ Տվեց ապահովության գիր (աման) նրանց անձերի, ունեցվածքի և հողերի (أراضيهم) համար, ոչ մի համայնքից (ملة)[29] չեն տարբերվելու. նրանց չի արգելվի իրենց օրենքները պահպանել, ապահովության մեջ կլինեն՝ ինչքան ժամանակ որ գլխահարկ վճարեն ամեն տարի իրենց կառավարչին։ Ամեն մի չափահաս պարտավոր է իր ունեցվածքի և անձի համար վճարել ըստ իր կարողության, ճանապարհ ցույց տալ ուղևորին, ճանապարհները նորոգել, օգնել իրենց կողմերով անցնող մահմեդական զինվորներին, օթևան տալ նրանց մեկ ցերեկ և գիշեր, պատսպարել, խորհուրդներ տալ։ Սակայն, եթե խարդախեն ու խաբեն, ապա մենք պատասխանատու չենք։

Վկա են Աբդալլահ իբն Զի-լ-Սահմայնը, Կակա իբն Ամրուն և Ջարիր իբն Աբդալլահը։

Գրվել է Մուհառամ (ամսին) տասնինը թվականին»[30]։

Բառացիորեն նույն բովանդակությամբ մի պայմանագիր տալիս է նաև զորավար Հուզայֆա իբն ալ-Յամանը Մահ Դինարի բնակիչներին[31]։

Հետաքրքրական է Ատրպատականին տրված պայմանագիրը[32], որի մեջ խոսվում է զինվորական ծառայության մասին։

«Սա է հավատացյալների իշխան (ամիր ալ-Մումինին) Օմար իբն ալ-Խաթթաբի [նշանակած] կառավարիչ Ութբա իբն Ֆարկադի տված գիրը Ատրպատականի (Ադարբայջան) բնակիչներին, որոնք գտնվում են նրա գաշտերում, լեռներում, կողմերում, և [կրոնական] բոլոր համայնքներին՝ ապահովություն (աման) է տրվում նրանց անձերի, ունեցվածքի, կրոնի և օրենքների[33] համար, պայմանով, որ վճարեն գլխահարկը ըստ իրենց կարողության, բացի երեխաներից, կանանցից, տկարներից և նրանցից, որոնք աշխարհում [ունեցվածք] չունեն և բացի [աշխարհից] հրաժարված կրոնավորներից, որոնք աշխարհում որևէ [եկամուտ] չունեն։ Սա շնորհվում է նրանց և նրանց հետ ապրողներին։ Պարտավոր են մի ցերեկ և գիշեր հյուրընկալել մահմեդական զինվորներին և ճանապարհ ցույց տալ։ Ով որ բանակ կանչվի որևէ տարում, այդ տարվա հարկից կազատվի։ Իսկ ով կմնա [տեղում], ապա կունենա նույն [իրավունքները], որ ունեն մնացյալ [բնակիչները], և ով կհեռանա, կունենա ապահովության երաշխիք (աման) մինչև որ ապաստան գտնի։

Գրեց Ջունդաբը, վկա են Բուքայր իբն Աբդալլահ ալ-Լայսին և Սիմաք իբն Խարաշա ալ-Անսարին։

---

29 Միլլա (ملة) նշանակում է կրոնական համայնք։ Այս դեպքում գուցե ուզում է ասել, որ տարբերություն չի դրվելու նրանց և ուրիշ ոչ մահմեդական կրոնական համայնքների միջև։

30 Tabari, IV, էջ 136 - 137.

31 Նույն տեղում, էջ 137։

32 Հետագայում՝ VIII դարում, Ատրպատականում և Մերձկասպյան շրջաններում (IX դարից կոչվում է Շիրվան) տիրապետող էր պետական հողատիրությունը, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, ուր նախարարները կարողացան մեծ չափով պահպանել հողատիրական ժառանգական իրավունքները։

33 شريعة (շարիաթ) հոգնակին شرائع նշանակում է կրոնական կամ սովորութական օրենքներ։

Գրվեց տասնութ թվականին»[34]։

Թեև մասամբ անորոշ, բայց հիմնականում նման բովանդակություն ունի նաև Մուղանին տրված պայմանագիրը.

«Սա է Բուքայր իբն Աբդալլահի տված պայմանագիրը Կովկասի լեռներում գտնվող Մուկանի բնակիչներին, ապահովելով նրանց ունեցվածքը, անձերը, կրոնը, օրենքները, պայմանով, որ ամեն մի չափահասի համար վճարեն հարկ՝ մեկ դինար կամ դրա արժեքը, մահմեդականին խորհուրդներ տան, ուղի ցույց տան և մեկ ցերեկ ու գիշեր հյուրընկալեն։ Նրանք ապահովության երաշխիք կունենան ինչքան ժամանակ որ [պայմանները] կկատարեն և օգնություն կցուցաբերեն, իսկ մենք [մեր խոստման] հաստատ կմնանք և Աստված է օգնական։ Սակայն, եթե նրանք պայմանները դրժեն և նենգություն գործեն, ապա ոչ մի ապահովության երաշխիք (աման) չի լինի, բացի այն դեպքից, եթե բոլոր անհավատարիմներին հանձնեն։ Հակառակ դեպքում նրանց համամիտ կճանաչվեն։

Վկա են Շամմախ իբն Դիրարը, Ռուսարիս իբն Ջանադիբը և Համալա իբն Ջուվայյան։

Գրվեց բսանմեկ թվականին»[35]։

Դարբանդի (որը խալիֆայության ժամանակ Արմինիա վարչական միավորի մասն էր կազմում) հետ կնքված պայմանագրում նույնպես խոսվում է լեռնականների զինվորական ծառայությունների մասին.

«Սա է հավատացյալների իշխան Օմար իբն ալ-Խաթթաբի [նշանակած] կառավարիչ Սուրակա իբն Ամրուի տված ապահովության գիրը Շահրբարազին[36] և Արմինիայի բնակիչներին ու հայերին։ Երաշխավորում եմ նրանց անձերը, ունեցվածքը, կրոնը, նրանք վնասի կամ անիրավության չպիտի ենթարկվեն։ Արմինիայի և Աբուաբի (Դարբանդ) բնակիչները՝ թե՛ բնիկ, թե՛ եկվոր ժողովուրդը և իրենց շրջակայքի բնակչությունը պարտավոր են օգնություն հասնել ամեն մի [թշնամու] արշավանքի ժամանակ, ենթարկվել ամեն մի տրված հրամանի, որ հարմար է գտնում [մահմեդական] կառավարիչը։ Ով ընդունի այս պայմանները, հարկ կվճարի, բացի զինվորական ծառայության [դեպքից], որովհետև զինվորական ծառայությունը կփոխարինի նրանց հարկերը[37], իսկ ով հրաժարվի դրանից և մնա [իր տեղում], նրա վրա կծանրանան Ատրպատականի ժողովրդի հանձն առած [պարտավորությունները]՝ հարկերը, [մահմեդականին] ճանապարհ ցույց տալը, մի ամբողջ օր հյուրընկալելը։ Սակայն եթե զինվորական ծառայություն անեն, այս բոլորից կազատվեն, իսկ եթե թողնեն [ծառայությունը], իրենց վրա կառնեն այս ծանրությունը։

Վկա են Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիան, Սալման իբն Ռաբիան և Բուքայր իբն Աբդալլահը։

Գրեց Մարդի իբն Մուկարրանը և վկայեց»[38]։

---

[34] Tabari, IV, էջ 155.

[35] Նույն տեղում, էջ 157։

[36] Դարբանդի պարսիկ կառավարիչ։

[37] جزى (հարկեր) جزية (գլխահարկ) բառի հոգնակին է, բայց միաժամանակ կարող է ընդհանրապես նշանակել հարկեր։

[38] Tabari, IV, էջ 157.

Հատկանշական է, որ եթե նախկին բյուզանդական նահանգների (Պաղեստին, Ասորիք, Վերին Միջագետք և այլն) բնակիչների հետ կնքված պայմանագրերը տրվում էին միայն քաղաքներին, ապահովելով պարիսպները, բնակչության ունեցվածքը կամ ջրաղացները, ապա իրանական նահանգների բնակչության հետ կնքված պայմանագրերը մեծ մասամբ վերաբերում են ամբողջ նահանգների իրավական վիճակին, թեև բոլոր դեպքերում բնակչության հիմնական պարտավորությունը խալիֆայության նկատմամբ մնում էր նույնը՝ հարկերի վճարումը։ Իրանական նահանգներում պարսիկ դեհկանների[39] հողատիրական իրավունքները մասամբ ապահովված էին։ Պարսիկ հողատեր իշխանները կարողացան պայմանագրերի շնորհիվ իրենց նահանգների որոշ մասը պահել որպես ժառանգական տիրություններ, որոնք կարող էին վաճառել կամ նվիրել, իսկ մյուս մասը անցավ արաբ ավագանու ձեռքը։ Օմայան խալիֆաները մեծ տիրություններ նվիրեցին արաբ զորավարներին, որոնք սկսեցին ժառանգաբար իշխել Իրանում[40]։ Պարսիկ հողատեր դեհկանների դասակարգը հարմարվեց արաբ նվաճողներին, ընդունելով մահմեդականությունը։ Մյուս կողմից իրանական նահանգներում հաստատված արաբ հողատերերը մերձենում էին պարսիկ դեհկաններին և յուրացնում նրանց բարքերը։

Ահա այս խմբի երկրների վիճակին ավելի մոտ էր Հայաստանում տիրող դրությունը։ Հայ նախարարների հողատիրական իրավունքները հաստատված էին պայմանագրերով, որոնց մասին վկայում են արաբ և հայ պատմիչները։

Վերին Միջագետքի քաղաքների նվաճման ընթացքում զորավար Իյադ իբն Ղանմին ներկայացավ Անձևացյաց (Ջաուազան) պատրիկը, որին հաշտության պայմանագիր տրվեց՝ երաշխավորելով նրա իրավունքները իր հողերի վրա, հարկ վճարելու պայմանով (مصالحه على ارضه على اتاوة)[42]։ 640 թ. վերջացնելով Վերին Միջագետքի Բյուզանդական մասի նվաճումը, Իյադը մտավ բուն Հայաստան և Խլաթի պատրիկին (Մամիկոնյան իշխանին) տվեց ապահովության գիր (كتاب), որի մեջ երաշխավորում էր նրա անձը, ունեցվածքը, երկիրը և հաստատում նրա կալվածատիրական իրավունքները հարկի դիմաց[43]։

Պայմանագրերի մի ամբողջ շարք տվեց 654 թ. Հաբիբ իբն Մասլաման հայ նախարարներին։ Նախ վերահաստատեց Խլաթի պատրիկի Իյադից ստացած պայմանագիրը, ապա ինքը հաշտության և ապահովության պայմանագիր (كتاب صلح و امان)[44] տվեց Մոկաց տիրոջը, ճանաչելով նրա կալվա-

---

39 Yaqubi, II, էջ 218.

40 «История Ирана с древнейших времен до конца XVIII в». Л., 1958. էջ 93։

41 Խալիֆայության ժամանակ պարսիկ հողատեր իշխանների (դեհկան) իրավունքների մասին պրոֆ. Ի Պետրուշևսկին գրում է. «Պետական հողերի կողքին կային «մուլք» հողեր, որոնք պատկանում էին տեղական հողատերերին (դեհկաններին) ոչ պայմանական, ժառանգական սեփականության իրավունքներով («История Ирана», էջ 105)։ Համենայն դեպս Իրանում բավական ուժեղ էր պետական հողատիրությունը (տե՛ս A. Lambton, Landlord and Peasant in Persia, Oxford, 1953, էջ 25—26)։ Պետական հողատիրությունը միջնադարյան Արևելքին բնորոշ երևույթ է (K. Маркс, Капитал, т. III, ч 2, М., 1950, էջ 804)։

42 Beladsori, էջ 176.

43 Նույն տեղում, էջ 199։

44 Նույն տեղում, էջ 200։ Սուլ՝ (صلح) նշանակում է հաշտության պայմանագիր։

ծատիրական իրավունքները իր երկրի վրա։ Հաբիբը պայմանագրեր տվեց նաև Արճեշի (Արչիշ) և Ապահունիքի (Բաջունայս, պետք է լինի Բահունայս) տեղական նախարարներին, որոնց իրավունքները ճանաչեց հողահարկի դիմաց[45]։ Դվինի կողմերը արշավելուց հետո նրան ներկայացավ Բագրևանդի (Բաղրատունդ) պատրիկը (Բագրատունի), որին նա պայմանագիր տվեց։ Թեպետ Բալաղուրին չի տալիս դրա պատճենը, այսուհանդերձ բերում է այս կարևոր պայմանագրի համառոտ բովանդակությունը, որը հետևյալն է.

«Նա հաշտության [պայմանագիր] կնքեց նրա հետ այդ [գավառների] համար, պայմանով, որ նա հարկ վճարի, մահմեդականներին խորհուրդներ տա, հյուրընկալի և օգնի նրանց թշնամիների դեմ»[46]։

Հաբիբը պայմանագրեր տվեց նաև Վասպուրականի (Բուսֆուրրաջան) պատրիկին (Արծրունի) նրա ամբողջ երկրի ու հողերի համար (عن مصالحه جميع بلاده و ارضى...) տարեկան հարկ վճարելու պայմանով։ Վերջապես նվաճելով Սիսականը (Սիսաջան) Հաբիբը հաշտության պայմանագիր տվեց նրա ամրոցների բնակիչներին (հավանաբար Սյունյաց տեղական իշխաններին)։

Այսպիսով, Հայաստանի կարևոր նախարարական տներից շատերը ստացան պայմանագրեր, որոնց շնորհիվ երաշխավորվում էին նրանց հողատիրական իրավունքները՝ հարկ վճարելու և այլ պարտավորություններ կատարելու պայմանով։ Թեև Բալաղուրին հիշում է, որ պայմանագրեր ստացան մի քանի նահանգներ՝ Խլաթ (Տուրուբերան), Արճեշ-Ապահունիք, Մոկս, Վասպուրական, Սյունիք և Բագրևանդ, այսուհանդերձ հավանական է, որ ուրիշ գավառների իշխաններ ևս ստացած լինեն նման պայմանագրեր։ Հայաստանի քաղաքներից պայմանագրեր ստացան Դվինը և Նախճավանը։ Բարեբախտաբար մեզ հասել է Դվինին տրված պայմանագրի բնագիրը.

«Սա է Հաբիբ իբն Մասլամայի գիրը Դվինի բնակիչներին՝ քրիստոնյաներին, զրադաշտականներին (մուչուս՝ մոգականներ) և հրեաներին, ներկաներին ու բացականերին առ այն, որ երաշխավորում եմ ձեր անձերը, ունեցվածքը[47], եկեղեցիները, տաճարները[48] և քաղաքի պարիսպները։ Դուք ապահովության մեջ եք, իսկ մենք պարտավոր ենք հաստատ մնալ [մեր պայմանին], ինչքան ժամանակ որ դուք հավատարիմ կմնաք և կվճարեք գլխարհարկը (ջիզիա) և հողահարկը (խարաջ)։

Վկա է Աստված և նա բավական է որպես վկա։
Կնիքով հաստատեց Հաբիբ իբն Մասլաման»[49]։

Սակայն վերաբերմունքը այլ էր Հայաստանի արևմուտքում՝ Բյուզանդիայի սահմանագլխում գտնվող Կարնո քաղաքի (Թեոդուպոլիս) նկատմամբ, որի բնակիչների մեջ կային հույներ։ Այն սրի ուժով նվաճվելուց հետո բնա-

---

45 Beladsori, էջ 200.

46 Նույն տեղում։

47 Մալ (مال) հոգնակին اموال արաբական մատենագրության մեջ ընդհանրապես նշանակում է սեփականություն, ունեցվածք։ Ժամանակակից արաբերենում նշանակում է դրամ։

48 بيعة բառը նշանակում է թե՛ քրիստոնեական, և թե՛ հրեական տաճար։

49 Beladsori, էջ 200. M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903.

կիչները ապահովության գիր խնդրեցին, բայց պատմիչը չի ասում՝ Հաբիբը դա տվեց թե ոչ, միայն այնքանն է հայտնի, որ բնակիչների մի մասը հեռացավ քաղաքից, իսկ մնացածները համաձայնեցին գլխահարկ վճարել։ Նվաճումից անմիջապես հետո Կարնո քաղաք բերվեցին արաբ վերաբնակիչներ։

Արաբական տիրապետության շրջանում հայ նախարարների հողատիրական իրավունքներն իրենց վերջնական ձևակերպումն ստացան VIII դարի սկզբին, Վալիդ խալիֆայի (705—715) և Աբդ ալ-Ազիզ ոստիկանի օրոք։ Հայ պատմագրությունը Մուհամմադ իբն Մրվան փոխարքային է վերագրում հայերի հետ պայմանագրի կնքումը («անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս»[50], ըստ որի որոշվում էին Հայաստանի հարկերը, և հոգևորականությունը ազատվում էր հարկերից։

703 թ. ապստամբության վրեժը լուծելու համար խալիֆաթը 705 թ. հայ նախարարներին հրավիրեց Խրամ և Նախճավան, այրուձիու հետ կապված հարցերը լուծելու առաջարկով և ոչնչացրեց նրանց։ Ենթադրվում է, որ այս դեպքում արաբները խոստանում էին հենց պայմանագիր կնքել հայ նախարարների հետ[51]։ Ապստամբությունից հետո Հայաստանից հեռացած նախարարներին Աբդ ալ-Ազիզ ոստիկանը հատուկ հրովարտակով ետ հրավիրեց Հայաստան, համոզելով վերադառնալ իրենց հայրենի գավառները։ Նա տվեց նրանց ընդունված ձևով պայմանագիր («գիր երդմամբ չափ ըստ սովորութեանն իւրեանց»[52]։ Այս պայմանագրով (կամ պայմանագրերով) որոշվեցին հայ նախարարների հողատիրական իրավունքները, ինչպես նաև հայոց հեծելազորի իրավական վիճակը, ըստ որի տասնհինգ հազարանոց հայկական այրուձին պետք է խալիֆայությունից ստանար տարեկան հարյուր հազար արծաթ դրամ (դիրհեմ), ինչպես նաև ռազմական հանդերձանք։

Օմայանների՝ հայ նախարարներին տված պայմանագրերը իրենց ուժը չկորցրին ոչ միայն մինչև նրանց անկումը, այլև դրանից հետո։ Պայմանագրեր տվեցին նաև Աբբասյանները, հատկապես IX դարի առաջին կեսին. դրա մասին վկայում են հայ պատմիչները։ 850—852 թթ. ապստամբության ժամանակ Բուղան Գուրգեն Արծրունուն ուղարկեց «Զնամակն գրեալ երդմանս... յանձն առեալ տալ նմա զիշխանութիւնն բնիկ տէրութեանն իւրեանց»[53]։ Սա մի պայմանագիր էր, որով ոստիկանը ճանաչում էր նրա իշխանությունը Վասպուրականի վրա։ IX դարի առաջին կեսին հայ նախարարների դիրքն այնքան ամուր էր, որ նրանք իրենց ժառանգական իրավունքները չկորցրեցին նույնիսկ այն դեպքում, երբ ապստամբություն բարձրացնելուց հետո ներում ստացան։ Երբ Բուղայի կողմից գերի տարված նախարարները վերադարձան Հայաստան, «չուէին յաշխարհ տէրութեան իւրեանց և ի սեպհականութիւնս և ի տունս... և բնակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութեան իւրում»[54]։

---

50 Սամուել Անեցի, Վաղարշապատ, 1898, էջ 82։ Հայ նախարարների հետ կնքված պայմանագրերը և մանավանդ Մուհամմադի կնքած պայմանագիրը հայ մատենագրության մեջ հաճախ են հիշվում, իսկ ուշ միջնադարում մահմեդական պետությունների լծի տակ դտնվող հայերը պայմանագրեր են հորինում իրենց իրավունքների մասին. դրանք վերագրելով Մուհամմադին (տե՛ս Հ. Փափազյան Մատենադարանի պարսկերեն հրովարտակները. հատ. Ա. Երևան, 1956, էջ 69—72)։

51 «Всемирная история», т. III, М., 1957, էջ 137։

52 «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1897, էջ 36։

53 «Թովմայի վարդապետի Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1888, էջ 149։

54 «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, էջ 170—171։

Հայ նախարարներին կալվածատիրական նոր պայմանագրեր տալու հետաքրքրական նկարագրություն կա Թովմա Արծրունու մոտ։ Մուտավաքքիլ խալիֆան Սամառայում հանդիսավոր հավաքույթի կանչեց «և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն»[55]։ Օրինակ, Արծրունյաց իշխան Գրիգորին տվեց պայմանագիր (հրովարտակ), որով սա ստացավ իր կալվածքները։ Գուրգեն Արծրունին նույնպես արքունի հրովարտակի (հրաման արքունի) շնորհիվ կարողացավ ստիպել իր մրցակից Գուրգեն Ապուպելճին զիջել բռնի ձեռք բերած կալվածքները[56]։

Պայմանագրեր տրվում էին նաև եկեղեցու հողատիրական և այլ իրավունքները հաստատելու համար։ 703 թ. ապստամբությունից անմիջապես հետո, երբ Սահակ կաթողիկոս Ձորոփորեցին գնաց Խառան խալիֆայության հետ բանակցելու և այպա վախճանվեց, Մուհամմադ իբն Մրվան փոխարքան նրա ընկերակիցներին տվեց «բան երդման ի ձեռն գրոյ»։ Երբ Հայաստանի ժողովուրդը իմացավ այս պայմանագրի մասին, և երկիրը հանդարտվեց[57]։

Օմար խալիֆայի ժամանակ (717—720), երբ Հովհաննես կաթողիկոս Օձնեցին գնաց նրա հետ բանակցելու հավատի ազատության, եկեղեցականներին հարկերից ազատելու և ամբողջ խալիֆայության մեջ քրիստոնյաներին ազատություն տալու համար, գրավոր պայմանագիր (հրովարտակ) խնդրեց՝ «զայս գրով տուր մեզ և ամենայն ազգ իմ ծառայեսցեն քեզ»։ Խալիֆան համաձայնեց «և վաղվաղակի հրամայեաց գրել գիր ըստ խնդրոյ նորա և կնքեաց մատանեաւ իւրով»[58]։

Խալիֆայության տված պայմանագրերը տարբեր ձևերով են հիշվում հայկական աղբյուրներում՝ գիր երդման, յետկար երդման, մուրհակ, հրովարտակ, թուղթ և այլն։

Հայ նախարարների կալվածատիրական իրավունքները հաստատող պայմանագրերի մասին ընդհանուր պատկերացում է տալիս արաբ աշխարհագրագետ Իբն Հաուկալը (X դար), որը գրում է.

«Նրանք հենց սկզբից պայմանագրեր (عهود) ունեին, որոնք որոշում էին նրանց [իրավական] վիճակը և հարկերի գանձումը ըստ նրանց ունեցած տիրույթների։ Օմայյաններն ու Աբբասյանները հաստատել էին նրանց վիճակը (سككهم) և տուրքեր (رسوم) էին վերցնում նրանց եկամուտներից (حمالاتهم)»։ Այպա ավելացնում է. «Որովհետև հայտնի է, որ նրանք հովանավորություն (զիմմա) չէին վայելում և ունեին մի քանի պայմանագրեր» (لا يسلم في ذمة معهم وعقد غير عهد)[59]։ Իբն Հաուկալը հստակորեն ակնարկում է, որ սկզբունքորեն Հայաստանը հաշտության պայմանագրով նվաճված երկիր է եղել, և մահմեդական մատենագրի (բնականաբար նաև մահմեդական օրենսդրության) համար հենց սկզբում (նկատի ունի VII դարը և գուցե

55 Թովմա Արծրունի, էջ 202։

56 Նույն տեղում, էջ 202—203։

57 Ղևոնդ, էջ 31։

58 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Երևան, 1961, էջ 68։ Հայ եկեղեցական հողերը համարվում էին վանքի։

59 Opus Geographicum auctore Ibn Hauqal. II, Lugd. Bat., 1938, էջ 343։

VIII դարի սկիզբը) կնքված պայմանագրերը իրենց ուժը չէին կորցրել նաև Բագրատունյաց ժամանակաշրջանում։

Հայաստանի նման վիճակ ուներ նաև Վիրքը (Արևելյան Վրաստանը), որը Արմինիա ոստիկանության մասն էր կազմում։ Հայաստանը նվաճելուց հետո Հաբիբ զորավարը վրաց իշխանին («բաթրիկ Ջուրզան») տվեց հաշտության պայմանագիր։ Ընդհանրապես Վրաստանում էլ տեղական իշխանները կարողացան պահպանել իրենց հողատիրական ժառանգական իրավունքները և երկրի հողերի մեծագույն մասը մնաց նրանց ձեռքում[60]։ Այս տեսակետից Հայաստանը և Վրաստանը մի ընդհանրություն էին կազմում և շատ բանով տարբերվում էին խալիֆայության այլ մասերից։

Այսուհանդերձ, բոլոր խալիֆաները չէ, որ միատեսակ էին վերաբերվում հայ նախարարների հողատիրական իրավունքները երաշխավորող պայմանագրերին։ VIII դարի երկրորդ կեսին եկավ մի ժամանակ, մանավանդ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի (786—809) օրերին, երբ Աբբասյանները ձգտում էին հաշվի չառնել հայ նախարարներին տրված պայմանագրերը։ Ղևոնդ պատմիչի վկայությամբ Աբբասյանները հրաժարվում էին վճարել հայոց հեծելազորի տարեկան ռոճիկը[61], իսկ դա հակասում էր VIII դարի սկզբին կնքված այն պայմանագրին, որը կարգավորում էր հայոց հեծելազորին տրվելիք ռոճիկի և հանդերձանքի հարցը։ VIII դարի երկրորդ կեսին պայմանագրերը անտեսելու մի օրինակ է նաև Խուզայմա ոստիկանի կողմից հայ եկեղեցական հողերը բռնագրավելու ձգտումը։ Սա Հովսեփ կաթողիկոսից ուզեց խլել կաթողիկոսարանին պատկանող երեք գյուղեր՝ Արտաշատ, Կավակերտ և Հոռոմոց Մարգ, իրենց ագարակներով մեկտեղ[62], թեև դա բռնի ձևակերպել էր որպես վաճառք։ Երկար դիմադրությունից հետո կաթողիկոսը կարողացավ ետ վերցնել Կավակերտը և Հոռոմոց Մարգը։ VIII դարի երկրորդ կեսի և մանավանդ նրա վերջի ծանր վիճակն են նկատի առել այն ուսումնասիրողները, որոնց կարծիքով խալիֆաթի տիրապետության ողջ շրջանում հայ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները[63] ընդհանրապես չէին երաշխավորված[64]։ Դա ճիշտ է այնքանով, որ VIII դարի երկրորդ կեսին հայ նախարարների կալվածատիրական իրավունքները երաշխավորող պայմանագրերը անտեսվում էին մանավանդ այնպիսի խալիֆաների կողմից, ինչպի-

---

60 Ոստիկան Ջառահի՝ Տփղիսին (և Վիրքին) տված պայմանագրում խոսվում է հողերը (ارضين) երաշխավորելու մասին (Beladsori, էջ 202).

61 Ղևոնդ, էջ 128։

62 Հովհաննես կաթողիկոս, էջ 142։

63 Այս տպավորությունը ուժեղացրել է հատկապես այն պարագան, որ նախորդող շրջանում՝ V—VII դդ., նախարարների հողատիրական իրավունքները բառիս բուն իմաստով ոչ պայմանական էին։

64 Նկատի ունենալով, որ մահմեդական իրավագիտության մեջ խոսվում է միայն մահմեդականի սեփականատիրական (միլք) իրավունքների մասին, արևելագիտության մեջ առաջացել է այն կարծիքը, թե զիմմին (ոչ-մահմեդականը) հողային սեփականության իրավունք չուներ (այլ սոսկ տիրապետության)։ Այս տեսակետը կարող է ճիշտ համարվել Ասորիքի կամ Եգիպտոսի համար (այն էլ՝ մասամբ), բայց ոչ Հայաստանի (ու Վիրքի)։ Սակայն եթե մահմեդական սեփականատերը տասանորդ (ուշր) էր վճարում, ապա զիմմին հողահարկ էր տալիս։ Այդ առթիվ տե՛ս M. V. Berchem, La propriété territoriale et l'impot foncier sous les premiers califes, Genève, 1886, էջ 32—33։

սիք էին Մանսուրը (754—775) և Հարուն ալ-Ռաշիդը։ Ահա այս երևույթն էր, որ 774—775 թթ. ապստամբության կարևոր պատճառներից մեկը դարձավ։ Այս ապստամբության ժամանակ Սահակ Բագրատունու որդին՝ Աշոտը փորձում է համոզել հայ նախարարներին՝ հրաժարվել ապստամբությունից, հիշեցնելով, որ խալիֆայության դեմ մղված պայքարի արդյունքը լինելու է այն, որ իրենք զրկվելու են ժառանգական տիրույթներից («զժառանգութիւն հարցն ձերոց»)[65]։ Իրոք, այս ապստամբությունը առիթ դարձավ, որ «անհավատարիմ» նախարարների հողատիրական իրավունքները չերաշխավորվեն Աբբասյանների կողմից։ Խիստ թուլացան Մամիկոնյանները, շարքից դուրս եկան Կամսարականները և այլ իշխանական տներ։ Հայաստանի որոշ գավառներ անցան արաբ հողատերերի ձեռքը, որոնք այստեղ հաստատվեցին VIII դարի վերջում։ Հարքունիս բռնագրավելով ապստամբության մասնակից որոշ նախարարների հողերը, խալիֆայությունը արաբական ցեղերին (կայսիկ, ութմանիկ և այլն), որպես պարգևական տիրույթ, շնորհեց հայկական որոշ գավառներ՝ երկրի արևմտյան և հարավ-արևմտյան կողմերում։ Այս բոլորը խախտեց հավասարակշռությունը հայ նախարարական միջավայրում, և հայ նախարարների համար ստեղծեց մի վտանգավոր իրավիճակ։

Սակայն IX դարի առաջին կեսին դրությունը փոխվեց. հայ նախարարների հետ կնքված պայմանագրերը նորից ուժի մեջ մտան, և արաբական իշխանությունները, ելնելով նոր իրադրությունից, ստիպված էին հարգել դրանք։ Հողատիրական համակարգը վերակառուցվեց նոր ձևով (մեռած ավատատիրոջ ժառանգությունը բաժանվում էր բոլոր որդիների միջև), և խալիֆայությունից ստացած պայմանագրերի ու գնման միջոցով որոշ նախարարական տներ ընդարձակեցին իրենց տիրույթները։ Աշոտ Մսակեր Բագրատունին, որի մայրը Մամիկոնյան էր, տիրացավ Տարոն գավառին՝ հավանաբար պայմանագրի միջոցով, իսկ Արշարունիքը գնեց («գանձագին արար»)[66]։ Միայն Մուտավաքքիլ խալիֆան էր (847—861), որ հայ նախարարներին ճնշելու համար փորձեց որոշ հայ ավատատերերի զրկել իրենց ժառանգական իրավունքներից, սակայն ի վերջո հաջողություն չունեցավ։ Խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում նման դեպքերը ժամանակավոր երևույթ էին և հիմնականում պայմանագրերն էին որոշում հայ նախարարների ավատական ժառանգական իրավունքները։

Հողատիրության այն ձևը, որից օգտվում էին հայ նախարարները, խալիֆայության մեջ հայտնի էր միլք (մուլք)[67] անունով։ Սա ընդհանուր իմաստ ունեցող մի բառ էր, օգտագործվում էր միջին դարերում մահմեդական պետություններում[68]։ Սկզբում դա նշանակում էր թե՛ իշխանություն, թե՛ սեփականա-

---

65 Ղևոնդ, էջ 143—144։

66 «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 106։

67 M. Plessner, Milk, Enc. of Islam, II, էջ 497. Mulk (EI, II, 791), Р. Шараль, Мусульманское право, М., 1959, էջ 78—83։

68 И. Петрушевский, Мульк. «Историческая энциклопедия», т. IX. Ըստ մահմեդական միջնադարյան իրավունքի (Ղուրան, է, 127), հողը պատկանում էր մահմեդական համայնքին, սակայն իրավունքի և իրականի միջև որոշակի տարբերություն կար, և հենց նույնիսկ օրենսգետների (օրինակ՝ Մավարդի) վկայությամբ գոյություն ուներ ոչ պայմանական ժառանգական հողատիրություն։

տիրական իրավունք։ Սակայն հետագայում մուլքը (իշխանություն) տարբերվում էր բուն հողային սեփականությունից՝ միլքից։ Միլքը (մուլք) բոլորովին տարբեր էր պայմանական հողատիրությունից (իկթա)[69], որովհետև ազատ կերպով կարող էր ժառանգվել, վաճառվել, նվիրվել և գրավ գրվել։ Միլքի իրավունք ստացող հայ նախարարը խալիֆայությունից ստանում էր պայմանագիր, որի մեջ որոշվում էին նրա իրավունքները թե՛ հողի, թե՛ ջրի նկատմամբ։

Պայմանագրով ձեռք բերված հողատիրության իրավաբանական ձևակերպումը տրված է Մավարդիի մատյանի ԺԲ գլխում, ըստ որի հաշտության պայմանագրով ավատատիրոջը պատկանող հողերը երկու տեսակ են.

1. Հողեր, որոնք թեև մնում են տիրոջ ձեռքում, բայց դրանց բուն տերը խալիֆայությունն է։ Նման հողերը վակֆ[70] են և դրանք չի կարելի վաճառել կամ գրավ դնել։

2. Հողեր, որոնց տերերը հաշտության պայմանագիր են կնքում առ այն, որ հողատիրության (միլք) իրավունքը նրանցն է (على ان ملك الارض لهم)։ Սրանք իրավունք ունեն իրենց հողերը վաճառել և գրավ դնել (لهم بيعها ورهنها)։ Նրանց հողերը մահմեդական համայնքին չեն անցնի և կդիտվեն որպես պայմանագրային երկիր (دار عهد)[71]։

Հայ նախարարների հողատիրությունը, ըստ էության, երկրորդ (ոչ պայմանական, ժառանգական) ձևին էր համապատասխանում, քանի որ հայ ավատատերը վաճառելու և գրավ դնելու ազատ իրավունք ուներ։ Հողերի վաճառքը կարգավորող սկզբունքի համաձայն քրիստոնյան կարող էր հող գնել նաև մահմեդականից։ Օրինակ, եթե քրիստոնյան գնում էր տասանորդ (ուշր) վճարող հող, ապա, ըստ Աբու-Հանիֆայի, նա պետք է վճարեր հողահարկ (խարաջ), որն, իհարկե, շատ ավելի էր, քան տասանորդը[72]։

Այսպիսով, պայմանագրով հաստատված միլք (մուլք) հողատիրությունը ժառանգական էր[73]։ Իհարկե խալիֆան կարող էր հողատիրոջ իրավունքները խլել, եթե վերջինս չկատարեր իր ստանձնած պարտավորությունները, բայց քանի դեռ հայ նախարարը վճարում էր հարկը և հնազանդ էր խալիֆային, նրա տոհմը ժառանգաբար տիրում էր իր կալվածքներում։ Հայ ավատատեր նախարարները, իրենց ձեռքում պահելով Հայաստանի հողերի մեծ մա-

---

[69] F. Lökkegaard, Islamic Taxation in Classic Period, Cop., 1950, էջ 14—99։

[70] Վակֆ (وقف), այսինքն վաճառքի ոչ ենթակա հողեր, որոնք կարող են լինել թե կրոնական հաստատության նվիրված, թե՛ պետական հողեր, որոնք մնալով հանդերձ նախկին տերերի ձեռքում, ենթակա չէին վաճառքի (Heffening, Wakf, Shorter Enc. of Islam, Leiden, 1953, էջ 624)։ Այս հողերը մտնում էին ֆայ կոչված խմբի մեջ, որոնք պայմանագրով նվաճված, բայց պետական հողեր հանդիսացող տիրույթներ էին (W. Juynboll, Fay, Shorter Enc. of Islam, էջ 95—96)։

[71] Mawardi, էջ 238—239, Հողատիրության ձևերի մասին տե՛ս A. Poliak, Classification of Lands in the Islamic law, Amer. J. sem. lang., 1910.

[72] Abu Yusuf, էջ 69.

[73] Ըստ Ի. Պետրուշևսկու, միլքը (մուլք) պատկանում էր իր տիրոջը լրիվ սեփականության իրավունքով (И. Петрушевский, Ислам в Иране в VII—XV вв., Л., 1966, էջ 161)։

սը (շնորհիվ իրենց հողատիրական ժառանգական իրավունքների)[74], կարողացան հիմքեր ստեղծել հայկական անկախ պետականության՝ Բագրատունյաց թագավորության առաջացման համար։

Խալիֆայության նահանգներում հողատիրության տարբեր ձևերի առկայությունը իր ազդեցությունն ունեցավ նվաճված երկրների ճակատագրի վրա։ Այն նահանգներում, ուր տեղական հողատերերի կալվածատիրական իրավունքները չէին երաշխավորված և իշխում էր պետական հողատիրությունը (Եգիպտոս, Ասորիք և Վերին Միջագետք) ժողովուրդը արագորեն արաբացավ։ Նահանգների մի այլ մասում (ինչպես Իրանը և Միջին Ասիան) տեղական իշխանների հողատիրական իրավունքները այս կամ այն չափով երաշխավորված էին (թեպետ և պետական հողատիրությունը մեծ տարածում ուներ)։ Այս երկրների բնակչությունը միայն մահմեդական կրոն ընդունելով (և մի քանի այլ զիջումներով), կարողացավ պահպանել իր լեզուն ու մշակույթը (մանավանդ պարսիկ ժողովուրդը)։

Հայաստանը և Վիրքը (Քարթլին), որոնց բնակչությունը ոչ մի զիջում չարեց նվաճողներին, պահպանեցին իրենց լեզուն ու մշակույթը և IX դարում ինքնուրույն պետականություն ստեղծեցին։

ПРАВА АРМЯНСКИХ НАХАРАРОВ НА ЗЕМЛЕВЛАДЕНИЕ В VII—IX ВЕКАХ ПО ДОГОВОРАМ ХАЛИФАТА

А. Н ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

После образования Халифата отношение властей к подчиненным немусульманским народам, в том числе и к армянскому народу, было определено договорами, которые в некоторых частях Халифата гарантировали также и наследственные права местных феодалов на землю. Об этом имеются сведения в арабских и армянских источниках. Несмотря на то, что во второй половине VIII в. Аббасиды стали не считаться с наследственными правами армянских феодалов, вследствие чего некоторые армянские нахарары, принявшие участие в восстании 704—775 гг., потеряли свои феодальные владения, армянские феодалы сумели на основании договоров с Халифатом сохранить свои наследственные землевладельческие права и внутреннюю автономию. Благодаря этому были созданы предпосылки для образования самостоятельного армянского царства Багратидов во второй половине IX в.

[74] Վաղ միջնադարում հայ նախարարների հողատիրական իրավունքների մասին տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1909, էջ 455—460։ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 312—316։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. Ա, Երևան, 1958, էջ 185—187։